# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020 թ-ի հունվարի 16-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 1 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում՝

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. 2020թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին հարցը
3. Համայնքի ղեկավարի դրույքաչափը հաստատելու մասին հարցը .
4. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և դրույքաչափերը հաստատելու մասին հարցը .
5. Համայնքի 2020թ-ի վարչական բյուջեի հաստատում.
6. Դաշտաքար համայնքի <<Գտնված երազ մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին հարցը.

1. Լսեցին—Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.
/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Աբրահամ Աբրահամյանը, Արմեն Աթոյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 1

Հաստատել 16.01.2020 թվականի ավագանու նիստի օրակարգը.

2. Լսեցին-- 2020թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին
(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

*Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 10- րդ, 11- րդ,12-րդ,13-րդ և 14-րդ հոդվածների ավագանին որոշեց՝*

*ՈՐՈՇՈՒՄ 2*

*Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտաքար համայնքի 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը հետևյալ կերպ.*

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ա) Մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 15000 դրամ;

բ) Սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

- 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 30000 դրամ:
- 501 –ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 50000 դրամ:
- 1001-ից մինչև 3000քմ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 50 000 դրամ:

- 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է 100 000 դրամ:

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների տեղադրման համար՝

- Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ:
- 20 և ավելի քառակուսի – մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվոթյուն չպահանվջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ.
4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար 200000 դրամ.

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.
6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.
7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար երեք հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար.

   ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ

   բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 դրամ

   գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ

   դ. խաղատների համար՝ 500000 դրամ

   ե. շահումով խաղերի համար՝ 250000

   զ. վիճակախաղերի համար՝ 100000
10. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

   ա. հիմնական շինությունների ներսում՝

   -մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.

   - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.

   -51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13000 դրամ.

   -101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 18000 դրամ.

   -201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.

   -501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000 դրամ.

   բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

   - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

   -26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ.

   - 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի

օբյեկտի համար` 3000 դրամ.

-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 6000 դրամ.

-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 12000 դրամ.

-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 22000 դրամ.

11. համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար`

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 3500 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար` զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար` 1500 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար` համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը` համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան` ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար` 100000 դրամ.

13. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների` միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար` 10000 դրամ.

## Տեղական վճարներ

Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքային ենթակայության Դաշտաքար համայնքի նախադպրոցական հաստատություն հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2020թվականի համար սահմանվում է 5000 դրամ: Նախադպրոցական հիմնարկություն մեկ ընտանիքից երեք և ավելի հաճախող երեխաների դեպքում մեկ երեխայի համար սահմանել100% արտոնություն:

Աղբահանության վճարի դրույքաչափը սահմանել համայնքում փաստացի բնակվող

ա)յուրաքանչյուր 1 անձի համար ամսական 100 .0 դրամ

բ) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 6000 դրամ:

գ) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 25 դրամ,

դ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5-ից 15 դրամ,

ե) կրթական, մշակութային, և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ:

զ) առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

**3.** Լսեցին --Համայնքի ղեկավարի դրույքաչափը հաստատելու մասին

(զեկ. Ն. Մալխասյան)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի ավագանին որոշեց.

## ՈՐՈՇՈՒՄ 3

Հաստատել համայնքի ղեկավարի դրույքաչափը   150 000  դրամ.

Որոշումն  անցավ  միաձայն.

Աբրահամ    Աբրահամյան

Լյուդվիգ    Այնազյան

Արմեն    Աթոյան

Արամ    Մալխասյան

Անգին    Սարգսյան

4. Լսեցին  ---Համայնքի  ղեկավարի աշխատակազմի  կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և դրույքաչափերը  հաստատելու  մասին

(զեկ. **Ն Մ ա լ խ ա ս յ ա ն**)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ ավագանին որոշեց.

# ՈՐՈՇՈՒՄ   4

Հաստատել համայնքապետարանի  աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների  թվաքանակը և դրույքաչափերը  հետևյալ  կերպ.

| | | | |
|---|---|---|---|
| 1. Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | | 100600 |
| 2. Աշխ. քարտուղար | 1 | | 122000 |
| 3. Աշխ. առաջին կարգի մասնագետ | 1 | | 95000 |
| 4. Օպերատոր | 1 | | 95000 |
| 5. Պահակ | 1 | 0,5 | 47000 |
| 6. Հավաքարար. | 1 | 0,5 | 47000 |

5. Լսեցին - Համայնքի  2020թ-ի  վարչական  բյուջեի  հաստատման մասին հարցը.

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Ա. Մալխասյանը և Ա. Սարգսյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները,
Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով
Դաշտաքարի ավագանին որոշում է

# ՈՐՈՇՈՒՄ 5

Տարեսկզբի մնացորդ՝ 11 958 105.9
Վարչական – 2 914 182.5
Ֆոնդային - 9 043 923.4
ա/ ֆոնդային բյուջեի եկամուտը սահմանել- 9 043 923.4
Ծախսեր

| | | |
|---|---|---|
| ա/ Կառավարման մարմնի պահպանում | – 5113 – 900,0 | հազ. դրամ |
| | – 5122 - 900,0 | հազ. դրամ |
| բ/ Հանգիստ, մշակույթ, կրոն | – 5112 – 700,0 | հազ. դրամ |
| | - 5122 – 350,0 | հազ. դրամ |
| | -5134- 60,0 | հազ. դրամ |
| գ/ Փողոցային լուսավորում | - 5112 - 2000,0 | հազ. դրամ |
| դ/ Ճանապարհ, տրանսպորտ | -5113- 2000,0 | հազ. դրամ |
| զ/ Ոռոգման ցանցի կառուցում | -5112- 1 085.8 | հազ. դրամ |
| է/ Նախադպրոցական ուսուցում | -5122- 1 048.1 | հազ. դրամ |

Հաստատել Դաշտաքար համայնքի 2020 թ-ի վարչական բյուջեն՝

Ընդամենը բյուջեն -20 605.88

եկամուտների գծով՝

հարկեր և տուրքեր – **2826,5**

այդ թվում՝ 1. գույքային հարկեր, շենք և շինություններից՝ -- 31,5

ֆիզ. անձանցից –7,5

այդ թվում՝ իրավաբանական անձանցից—24,0

2. հողի հարկ—1405,0

ֆիզ.անձ.—1405,0

3. գույքահարկ փոխադրամիջոցներից—1390,0

4. տեղական տուրք, --22.0

5. դոտացիա - 12757,4

այդ թվում՝ դոտացիա պետ. բյուջեից --- 12757,4

Այլ եկամուտներ՝ 2085,8

1. հողի վարձավճար—1785,8

2. Տեղական վճար–300,0

Ծախսերի գծով—20605,88

*այդ թվում՝*

| | |
|---|---|
| 1. կառավարման ապարատ | 10697,4 հազ. դրամ |
| 2. ճանապարհ. տրանսպորտ | 350,0 հազ. դրամ |
| 3. շրջակա միջավայրի պահպանում | 648,0 հազ. դրամ |
| 4. փողոցների լուսավորում | 530,0 հազ. դրամ |
| 5. հանգիստ, մշակույթ, կրոն | 550,0 հազ. դրամ |
| 6. սոց. պաշտպանություն | 650,0 հազ. դրամ |
| 7. գույքի նկատմամբ իր. Պետ. գրանցում | 226,0 հազ. դրամ |
| 8. Նախադպրոցական ուսուցում | 3040.3 հազ. դրամ |
| 9. Ոռոգման ցանցի կառուցում | 2914.18 հազ. դրամ |
| 8. պահուստային ֆոնդ | 1000,0 հազ. դրամ |

Ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

| | |
|---|---|
| 3.1 կառավարման ապարատ | --10697,4 հազ. դրամ |
| որից ա/4111 աշխատավարձ | --8535,8 հազ. դրամ |
| բ/ 4112 պարգևատրում | --656,6 հազ. դրամ |
| գ/ 4212 էլ. էներգիա | --100.0 հազ. դրամ |
| դ/ 4214 կապի ծառայություն | ---140.0 հազ. դրամ |
| ե/4215 ապահովագրական ծախսեր | ---35,0 հազ. դրամ |
| զ/ 4221 գործուղում | --- 50.0 հազ. դրամ |
| է/4232 համակարգ.ծառ. | ----150.0 հազ. դրամ |
| ը/4234 տեղեկատվ. ծառ. | ----160.0 հազ. դրամ |
| թ/ 4252 մեք. սարք.ընթ. նորոգ. | ----250.0 հազ. դրամ |
| ժ/4261 գրասենյակ. նյութեր | ----150.0 հազ. դրամ |
| ի/4263 վերապատրաստման և ուսուցման | ----50.0 հազ. դրամ |
| ի/4264 տրանսպորտ. նյութեր | ----300.0 հազ. դրամ |
| լ/4267 տնտեսական նյութեր | ---100.0 հազ. դրամ |
| խ/4823 պարտադիր վճար | ----20.0 հազ. դրամ |
| 3.2 Ճանապարհ, տրանսպորտ | ----350,0 հազ. դրամ |
| ա/ 4251- ընթ. նորոգում և պահպանում | ----300,0 հազ. դրամ |
| բ/ 4264- տրանսպորտային նյութեր | ----50,0 հազ. դրամ |
| 3.3 Շրջակա միջավայրի պահպանում | ----648.0 հազ. դրամ |
| Այդ թվում ա / 4213 աղբահանություն | ----648.0 հազ. դրամ |

3.4 փողոցային լուսավորում ----530,0 հազ. դրամ
Այդ թվում ա /4212 էլ. էներգիայի ծառայություն ----200.0 հազ. դրամ
բ /4251 ընթ. նորոգ. և պահպանում ----170,0 հազ. դրամ
գ / 4267 տնտեսական նյութեր ----160.0 հազ. դրամ

3.5 հանգիստ մշակույթ կրոն ---- 550.0 հազ. դրամ
Այդ թվում ա/ 4239 ընդ. Բնույթի այլ ծառ. ----300.0 հազ. դրամ
բ/ 4269 հատուկ նպատակ. այլ ծառ. ----250.0 հազ. դրամ

3.6 սոց. պաշտպանություն ----650.0 հազ. դրամ
Այդ թվում
ա /4726 հուղարկավորման նպաստ ----300.0 հազ. դրամ
բ/ 4729 այլ նպաստներ ----300.0 հազ. դրամ
գ/ 4819 նվեր այլ շահույթ չհետապնդող կազմ. ----50.0 հազ. դրամ

3.7 գույքի նկատմամբ իրավունքի պետ. Գրանցում ----226.0 հազ. Դրամ
ա/ 4241 մասնագիտական ծառայություններ ----60.0 հազ. դրամ
բ/ 4823 պարտադիր վճարներ ----156.0 հազ. դրամ
գ/ 4822 այլ հարկեր ----10.0 հազ. դրամ
3.8 նախադպրոցական ուսուցում ----3040.3 հազ. դրամ
4637 դրամաշնորհ ----3040.3 հազ. դրամ
3.9 ոռոգման ցանցի կառուցում ----2914.18 հազ. դրամ
4637 դրամաշնորհ ----2914.18 հազ. դրամ
3.8 պահուստային ֆոնդ ----1000,0 հազ. դրամ
4891 պահուստային միջոցներ ----1000,0 հազ. դրամ

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

6. Լսեցին - համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին հարցը.

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Ա. Մալխասյանը և Ա. Սարգսյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները,

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

Դաշտաքարի ավագանին որոշում է

ՈՐՈՇՈՒՄ 6

Հաստատել Դաշտաքարի <<Գտնված երազ մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը (կցվում է հավելված 1)

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ. քարտուղար ՝ Ա. Վարդանյան